այն բարեկամությունը, որ մենք մի քանի տարի արդեն վայելել ենք», - ասված է Ֆրանցիսկոս պապի նամակում:

Իր խոսքում շնորհակալություն հայտնելով ջերմ գրության համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերհիշեց իր հանդիպումները Հռոմի Ֆրանցիսկոս պապի հետ ինչպես Արգենտինայում նրա առաջնորդության շրջանում, այնպես եւ Վատիկանում: Նորին Սրբությունը պապական նվիրակի միջոցով Հռոմի պապին փոխանցեց եղբայրական իր ողջույնները եւ արդյունաշատ գահակալության բարեմաղթանքները:

Զրույցի ընթացքում նաեւ անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու ջերմ հարաբերություններին, մասնավորապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վատիկանի միջեւ ձեւավորված սերտ համագործակցությանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԷԿԼՕՖ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻՆ

Ապրիլի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԷԿԼՕՖ միջազգայինի գլխավոր տնօրեն Փաթ Գլիսոնին՝ Հայաստանյան ԷԿԼՕՖ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանի եւ հիմնադրամի գլխավոր տնօրեն Տիգրան Հովհաննիսյանի ուղեկցությամբ:

Ողջունելով ԷԿԼՕՖ-ի գլխավոր տնօրենի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց Հայաստանյան ԷԿԼՕՖ հիմնադրամի գործունեության եւ ԷԿԼՕՖ միջազգայինի կողմից վերջինիս ցուցաբերվող աջակցության համար: Անդրադառնալով Հայաստանի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ հիմնադրամն իր գյուղատնտեսական ու կրթական ծրագրերով հնարավորություն է ընձեռում անհատների եւ համայնքների՝ հաղթահարելու իրենց առջեւ ծառացած զանազան խնդիրներ: Նորին Սրբությունը նաեւ նշեց, որ հիմնադրամը բարենպաստ ներդրում ունի միջեկեղեցական հարաբերություններում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց տարածաշրջանի խնդիրներին ու մարտահրավերներին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջողություններ մաղթեց տիար Գլիսոնին Հայաստանյան ԷԿԼՕՖ-ի ղեկավարության հետ ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպության նոր ռազմավարության մշակման գործում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ